

ՏԵՂԵԿԱԼՔ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
խորհրդի անդամների բացակայությունները հաշվարկելու միատեսակ չափանիշները
սահմանելու մասին» խորհրդի 26.01.2016թ. թիվ 2/7-Լ որոշման
քվեարկությունների վերաբերյալ

Սույն տեղեկանքը կազմվում է նկատի ունենալով այն հանգամանքը, որ խորհրդի
անդամները չափանիշները քննարկել և քվեարկել են առանձին-առանձին:

**Խորհրդի 13 անդամներից սիստին մասնակցել են 12-ը (այդ թվում՝ խորհրդի
նախագահը):**

Խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան,

խորհրդի անդամներ՝ Հարություն Հարությունյան, Կարեն Մեծլումյան, Կարեն
Սարգսյան, Տիգրան Խուրշուդյան, Մարտուն Փանոսյան, Մելանյա Առուստամյան, Նելլի
Հարությունյան, Լիպարիտ Սիմոնյան, Երվանդ Վարոսյան, Լուսինե Սահակյան և Սիմոն
Բաբայան

Ընդունված որոշման տեքստն՝ ըստ քվեարկության բաժանված մասերի՝

* * * * *

I. Քվեարկել են՝

«Կողմ»՝ 12 ձայն, «Դեմ»՝ չկա, «Ձեռնպահ»՝ չկա.

Պալատի կանոնադրության 16.34 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝
**Փաստաբանների խորհրդի անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարում է նրա
կողմից իր պարտականությունները պարզաճ չկատարելու այն է՝ մեկ օրացույցային
տարվա ընթացքում անհարգելի պատճառով Փաստաբանների պալատի խորհրդի 7
նիստերին բացակայելու դեպքում:**

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ կանոնադրությամբ նախատեսված նշված
վարքագծի կանոնը նպատակ ունի ապահովել Պալատի խորհրդի անդամների
մասնակցությունը խորհրդի նիստերին՝ Պալատի խորհրդի բնականոն գործունեությունն
ապահովելու համար: Հատկանշական է, որ այս նպատակը բացահայտվում է նաև
Պալատի կանոնադրության 16.6 կետի կանոնակարգմամբ առ այն, որ՝ **փաստաբանների
պալատի խորհրդի նիստերին Փաստաբանների պալատի խորհրդի անդամը
քվեարկում և իր այլ լիազորություններն իրականացնում է անձամբ:**

Պալատի խորհուրդը՝ խորհրդի անդամների բացակայությունները հաշվարկելու
միատեսակ չափանիշները սահմանելու տեսանկյունից կարևոր է համարում քննարկել
բացականչելի հետ կապված հետևյալ հարցերը՝

**1. արդյո՞ք մեկ օրվա ընթացքում մի քանի նիստերի բացակայությունը պետք է
հաշվել մեկ բացակայություն, թե՞՝ մի քանի նիստերի բացակայություն.**

2. արդյո՞ք նիստի ընթացքում հեռանալը պետք է համարել բացակայություն.

**3. խորհրդի նիստին բացակայելու ո՞ր պատճառները կարող են հարգելի
համարվել:**

* * *

1. Պալատի խորհուրդը գտնում է, որ մեկ օրվա ընթացքում նշանակված նիստի կամ
նիստերի (անկախ քանակից) բացակայությունը պետք է համարել մեկ բացակայություն,
քանի որ խորհրդի անդամի կողմից մեկ օրվա անհարգելի բացակայությունը չպետք է իր

համար անկանխատեսելի հետևանքներ, այդ թվում՝ լիազորությունների դադարեցման բացասական հետևանքներ ունենա: Հատկանշական է, որ Պալատի խորհուրդը որոշ դեպքերում մեկ օրվա ընթացքում ունենում է առնվազն 10 (տաս) կարգապահական գործերով նիստեր (անդամավճարների կամ վերապատրաստումների գծով): **Հետևաբար՝ մեկ օրվա ընթացքում մեկ կամ մի քանի նիստերից անհարգելի պատճառներով բացակայությունը պետք է համարել մեկ բացակայություն** (այս նախադեպը սահմանվել է Պալատի խորհրդի 17.11.2014թ. թիվ 31/2-Ա որոշմամբ):

Պալատի խորհուրդը գտնում է նաև, որ խորհրդի անդամի կողմից մեկ օրվա ընթացքում նշանակված նիստին կամ նիստերին ուշացած մասնակցելը չի համարվում բացակայություն:

* * * * *

II. Քվեարկել են՝

«Կողմ»՝ 12 ձայն, «Դեմ»՝ չկա, «Ձեռնպահ»՝ չկա.

* * *

2. Պալատի խորհուրդը գտնում է, որ Պալատի խորհրդի նիստից առանց հարգելի պատճառի հեռանալը նույնպես պետք է համարել բացակայություն, քանի որ խորհրդի նիստին մասնակցելը նաև Պալատի խորհրդի անդամի պարտականությունն է:

Պալատի խորհրդի նիստից հեռանալը հարգելի է համարվում, եթե խորհրդի անդամը մինչև հեռանալը տեղեկացնում է խորհրդին սույն որոշման 3-րդ կետում նշված հարգելի պատճառի մասին: Պալատի խորհրդի անդամը ինքնաբացարկ հայտնելու դեպքում կարող է տվյալ նիստին չմասնակցել:

* * * * *

III. Քվեարկել են՝

«Կողմ»՝ 12 ձայն, «Դեմ»՝ չկա, «Ձեռնպահ»՝ չկա.

* * *

3. Հաշվի առնելով Պալատի խորհրդի ծանրաբեռնված աշխատանքը (մեկ տարվա ընթացքում ավելի քան 300 նիստ), ինչպես նաև խորհրդի անդամների՝ պրակտիկ փաստաբաններ հանդիսանալու հանգամանքը, ինչը երբեմն պատճառ է հանդիսանում խորհրդի նիստերին չներկայանալու, Պալատի խորհուրդը գտնում է, որ բացակայությունները կարող են հարգելի համարվել այն դեպքերում, երբ Պալատի խորհրդի անդամը խորհրդի նիստի ժամանակահատվածում՝

1) մասնակցում է քննչական կամ դատավարական գործողության, ինչպես նաև դատական նիստի, կամ նշված գործողությանը կամ նիստին մասնակցում է Երևան քաղաքից դուրս, ինչի պատճառով չի հասցնում մասնակցել խորհրդի նիստին.

2) մասնակցում է իր կամ իր ընտանիքի անդամի հետ կապված միջոցառմանը (ծնունդ, կնունք, հարսանիք և այլն).

3) հիվանդ է կամ ընտանիքի անդամի հիվանդության պատճառով չի կարող մասնակցել խորհրդի նիստին.

4) գտնվում է արձակուրդում և այդ ընթացքում չի զբաղվում իր գործունեությամբ.

5) գտնվում է արտերկրում՝ պայմանավորված մասնագիտական գործունեությամբ, գործուղման, վերապատրաստման կամ արձակուրդ անցկացնելու պատճառով.

6) դասավանդում կամ վերապատրաստում է կամ մասնակցում է վերապատրաստման դասընթացի, որպես ունկնդիր, ինչպես նաև մասնակցում է գիտական մասնագիտական միջոցառմանը:

Խորհրդի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար Պալատի

խորհրդի անդամը պետք է իր բացակայության մասին նախապես տեղեկացնի էլեկտրոնային փոստի միջոցով՝ խորհրդի մյուս անդամներին կամ հեռախոսով Պալատի աշխատակազմին՝ նշելով բացակայության պատճառը:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ սույն որոշմամբ նշված հարգելի պատճառները սպառիչ չեն և կարող են յուրաքանչյուր խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման հարցի քննարկման ժամանակ հաշվի առնվել այլ պատճառների հարգելի կամ անհարգելի լինելու հանգամանքը:

* * * * *

Նիստի ընթացքում խորհրդի անդամներ Լիպարիտ Սիմոնյանի և Լուսինե Սահակյանի կողմից առաջարկվել է ևս մեկ չափանիշ սահմանել, ըստ որի՝ *հարգելի պատճառ է հանդիսանում նաև խորհրդի անդամի կողմից անհապաղ անհրաժեշտությամբ պայմանավորված իր վստահորդի հետ հանդիպումը:*

Այս առաջարկը առարկվել է խորհրդի մի քանի անդամների կողմից այն պատճառաբանությամբ, որ այս մոտեցումը չարաշահումների առիթ կարող է հանդիսանալ, քանի որ միշտ էլ կարելի է պատճառ բերել վստահորդի հետ հանդիպման անհրաժեշտությունը, ինչը թե քաղաքացիական, և թե քրեական գործերով կարող է մշտապես տեղի ունենալ:

Լիպարիտ Սիմոնյանի այն տեսակետի հետ կապված, որ դա կարող է լինել, օրինակ, հետախուզման մեջ գտնվող վստահորդի հետ հանդիպմամբ պայմանավորված, խորհրդի անդամները նկատեցին, որ 3-րդ կետում նշված ցանկը սպառիչ չէ և կոնկրետ այդ հարցը կարող է քննարկվել 3-րդ կետի կանոններով:

Խորհրդի անդամներ Լիպարիտ Սիմոնյանի և Լուսինե Սահակյանի հիշյալ առաջարկը խորհրդի նախագահը դրեց քվեարկության:

Քվեարկել են՝

«Կողմ»՝ 4 ձայն (Լիպարիտ Սիմոնյան, Լուսինե Սահակյան, Երվանդ Վարոսյան և Սիմոն Բաբայան), «Դեմ»՝ 8 ձայն, «Ձեռնպահ»՝ չկա:

Քվեարկության արդյունքներով առաջարկը չընդունվեց:

* * * * *

IV. Քվեարկել են՝

«Կողմ»՝ 10 ձայն, «Դեմ»՝ 1 ձայն (Լուսինե Սահակյան),

«Ձեռնպահ»՝ 1 ձայն (Երվանդ Վարոսյան).

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Պալատի կանոնադրության 16.34 կետի 2-րդ ենթակետի պահանջով, Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- Պալատի խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման հարցի քննարկման ժամանակ ղեկավարվել սույն որոշման մեջ նշված (սահմանված) չափանիշներով:

- Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի փետրվարի 1-ից:

Խորհրդի քարտուղար՝ Իրինա Փիլոյան